ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094203-3Հ

ք. Երևան <<31>> 01. 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն.Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և <<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտորի պաշտոնակատար՝ Ռ.Հայրապետյանի, ով գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.4.2.03 հետբուհական մասնագիտական կրթական ծրարգի շրջանակներում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի անվճար համակարգում ընդգրկված միջին տարեկան 15 արտադրությունից կտրված ասպիրանտների և 49 արտադրությունից չկտրված ասպիրանտների ուսուցում, որի դիմաց Պատվիրատուն պարտավորվում է ուսանողական նպաստների ձևով իրականացնել ուսման վարձի փոխհատուցում:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է՝ 20 121 600 (քսան միլիոն մեկ հարյուր քսանմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ /հաշվի առնելով 2018 թվականի 925,9 հազար դրամ մնացորդը/, որը ներառում է անվճար համակարգի ուսանողների ուսման վարձի լրիվ փոխհատուցումը՝ 16 259 500 (տասնվեց միլիոն երկու հարյուր հիսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և ասպիրանտուրա ընդունվելու նպատակով դիմորդներին օտար լեզվի և <<Ինֆորմատիկա և տեղեկատվահաղորդակցական հիմունքներ>> առարկաների նախապատրաստական դասընթացների կազմակերպման ստուգարքների հանձման համար՝ 4 788 000 (չորս միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ գումար:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 27-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան >> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 2 շենք	ք. Երևան, Նալբանդյան 128
ՀՀ ՖԾ գործառնական վարչություն	ՀՀ ՖԾ գործառնական վարչություն
Հ/Հ 900011034155	Հ/Հ 900018001876
Նախարարության գլխավոր քարտուղար՝ ---------- Ն.Հարությունյան	Ռեկտորի պաշտոնակատար՝ ---------- Ռ.Հայրապետյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ